



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

15.09.2017թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2017/33

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ՝ նաև Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 22.08.2017թ. թիվ 03/26-3/15290-17 գրությամբ «ԹԱՄՍԱՐ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ առողջապահության նախարարության 22.08.2017թ. թիվ ՆԶ/10549-17 գրության հիման վրա, 22.08.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «ԹԱՄՍԱՐ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստին մասնակցում էր ՀՀ ֆինանսների նախարարությանը լիազորված ներկայացուցիչ Արթուր Բաղդասարյանը:

2. ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ առողջապահության նախարարությունը 22.08.2017թ. թիվ ՆՁ/10549-17 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) կողմից ս.թ. օգոստոսի 3-ին սեղմված բնական գազի ձեռքբերման նպատակով կազմակերպված N «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2017-17» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցել է «ԹԱՄՍԱՐ» ՍՊԸ-ն:

Հայտերի բացման նիստում «ԹԱՄՍԱՐ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է բավարար, և հիմք ընդունելով՝ մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները՝ «ԹԱՄՍԱՐ» ՍՊԸ-ն 7-րդ չափաբաժնի մասով հայտարարվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

ՀՀ կառավարության 04.05.2017 թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված տվյալների ճշտման նպատակով ս.թ. օգոստոսի 4-ին Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ուղարկված հարցմանն ի պատասխան՝ 11.08.2017թ. ստացված եզրակացության համաձայն՝ «ԹԱՄՍԱՐ» ՍՊԸ-ն ունեցել է 564.453 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն:

Հանձնաժողովը «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով ս.թ. օգոստոսի 11-ին հայտերի գնահատման արդյունքների ամփոփման նիստում «ԹԱՄՍԱՐ» ՍՊԸ-ի հայտը մերժել է:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր ««Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» ՊՈԱԿ-ի լիազորված ներկայացուցիչ Սիրանույշ Պապիկյանը:

3. «ԹԱՄՍԱՐ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Ընկերությունը Խորհրդին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Արդեն մի քանի տարի է, ինչ «ԹԱՄՍԱՐ» ՍՊԸ-ն մասնակցում է գնման մի շարք ընթացակարգերի, որոնց արդյունքում հաղթող է ճանաչվել և պատշաճ կատարել իր բոլոր պայմանագրային պարտավորությունները: 2017թ. ևս «ԹԱՄՍԱՐ» ՍՊԸ-ն մասնակցել է

գնման մի շարք ընթացակարգերի, այդ թվում «Ջերմուկ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ի, Ջերմուկի համայնքապետարանի և «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» ՊՈԱԿ-ի հայտարարած ընթացակարգերին, որոնց արդյունքում հաղթող է ճանաչվել:

«Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հայտարարած N «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2017-17» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելիս անուշադրության հետևանքով տեղի էունեցել վրիպում. Հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ընկերությունը ունեցել է հարկային պարտավորություն: Այդ կապակցությամբ հայտնում եմ, որ հարկերի տարբեր տեսակներ վճարելիս թյուրիմացաբար հարկային պարտավորության մի տեսակի գծով ստացվել է կանխավճար, իսկ մյուս տեսակի գծով՝ մնացել է պարտավորություն:

Խնդրում եմ, հաշվի առնելով «ԹԱՄՍԱՐ» ՍՊԸ-ի պարատաճանաչ աշխատանքը գնման գործընթացներում, տեղի ունեցածը համարել սխալմունք, այլ ոչ դիտավորություն, և «ԹԱՄՍԱՐ» ՍՊԸ-ին չներառել գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր Ընկերության լիազորված ներկայացուցիչ Արթուր Մարկոսյանը:

4. ՍՑ-ԷՍ-2017/33 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 22.08.2017թ. թիվ 03/26-3/15290-17 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ առողջապահության նախարարության 22.08.2017թ. թիվ ՆՁ/10549-17 գրությունը, «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2017-17» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ԹԱՄՍԱՐ» ՍՊԸ-ի ներկայացված հայտը, «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2017-17» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 03.08.2017թ. նիստի թիվ 2, 10.08.2017թ. նիստի թիվ 3, 11.08.2017թ.

նիստի թիվ 4 արձանագրությունները, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին (այսուհետ՝ նաև Կոմիտե) 04.08.2017թ. կատարված հարցումը, Կոմիտեի կողմից 10.08.2017թ. ներկայացված եզրակացությունը, ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 12 բաժնի կողմից 01.09.2017թ. «ԹԱՄՍԱՐ» ՍՊԸ-ին տրված տեղեկանքը, Պատվիրատուի կարծիքը և դիրքորոշումը:

«Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 03.08.2017թ. սեղմված բնական գազի ձեռքբերման նպատակով կազմակերպված N «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2017-17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ նաև՝ ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել «ԹԱՄՍԱՐ» ՍՊԸ-ն՝ 7-րդ չափաբաժնի մասով:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2017-17» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովի 03.08.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի N 2 արձանագրության 1.5 կետով որոշել է ընթացակարգի 7-րդ չափաբաժնով «ԹԱՄՍԱՐ» ՍՊԸ-ին ճանաչել որպես առաջին տեղն զբաղեցրած մասնակից:

Նույն արձանագրության 2.2 կետով Հանձնաժողովը որոշել է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին ներկայացնել հարցում՝ ընթացակարգի առաջին տեղն զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ֆինանսական միջոցների առկայության վերաբերյալ:

Հանձնաժողովը 04.08.2017թ. Կոմիտեին ուղարկել է հարցում՝ խնդրելով տարամադրել «ԹԱՄՍԱՐ» ՍՊԸ-ի՝ 03.08.2017թ. դրությամբ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման»

կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ մասով նախատեսված տվյալների վերաբերյալ տեղեկատվություն:

Կոմիտեի կողմից 10.08.2017թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «ԹԱՄՍԱՐ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 564,453 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն:

«ԳՀԱՊԶԲ-ՀՎԿԱԿ-2017-17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին «ԹԱՄՍԱՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը կազմել է 500,000 ՀՀ դրամ:

Հանձնաժողովը 11.08.2017թ. ժամը 15:30-ին կայացած նիստի թիվ 6 արձանագրության 2.2 կետով որոշել է մերժել «Պավել և Ընկերներ» ՍՊԸ-ի հայտը՝ վերջինիս կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու հիմնավորմամբ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին,

- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

- 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

- 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խրոհիրդին: Նույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում նույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

«Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից սեղմված բնական գազի ձեռքբերման նպատակով կազմակերպված N «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2017-17» ծածկագրով գնանշման հարցման հրավերի 1-ին մասի՝

- 8.12 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև նույն հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում նույն ենթակետում հարցումն ուղարկվում է Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին:

- 8.14 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 8.12 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին նույն հրավերի 9-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում նույն հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջներին և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի

գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստին Ընկերության ներկայացուցիչը հայտնել է, որ Ընկերության հարկերի տարբեր տեսակների մարման նպատակով վճարումներ իրականացնելիս թյուրիմացաբար հարկային պարտավորության մի տեսակի գծով ստացվել է կանխավճար, մինչդեռ մյուս տեսակի գծով պարտավորությունը չի մարվել:

Միաժամանակ, Ընկերությունը Խորհրդին է ներկայացրել ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 12 բաժնի կողմից 01.09.2017թ. «ԹԱՄՍԱՐ» ՍՊԸ-ին տրված տեղեկանքը, որի համաձայն՝ Ընկերությունը 03.08.2017թ. դրությամբ ունեցել է 520.114 ՀՀ դրամի չափով դեբետային մնացորդ (փաստացի գերավճար):

Խորհուրդն արձանագրում է, որ «ԹԱՄՍԱՐ» ՍՊԸ-ն ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա՝ 03.08.2017թ., դրությամբ ունեցել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով՝ իր կողմից ներկայացրած գնային առաջարկի մեկ տոկոսը գերազանցող ժամկետանց պարտավորություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 2-րդ հոդվածի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կառավարումը և կառավարումը:

Օրենքի 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի N 2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարելով և հավաստելով, որ բավարարում է «ԳՀԱՊԶԲ-ՀՎԿԱԿ-2017-17» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, ներկայացրել է իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն, որի արդյունքում խախտել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված իր իրավունքների և պարտականությունների իրականացմանն ուղղված գործողությունները, ինչը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «ԹԱՄՍԱՐ» ՍՊԸ-ն խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց


1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 22.08.2017թ. «ԹԱՄՍԱՐ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը բավարարել:

2. «ԹԱՄՍԱՐ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝



ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ